ա) Բանտարկութիւն (քրէական համար՝ շղթայակապ)։

բ) Տուգանք։

գ) Մարմնական պատիժներ (ծեծ եւ այլն)։

դ) Մահուան պատիժ։

Իւրաքանչիւր մեղադրեալ ձերբակալուում եւ բանտ է տարուում — մինչեւ դատի օրը։ Բացի քրէական յանցաւորներից, միւս բոլոր բանտարկեալները կարող են երաշխաւորութեամբ նախնական բանտարկութիւնից ազատուել (մժը)։ Նոյնիսկ քրէական յանցաւորը, եթէ նրա յանցանքը «երկրայելի» է, կարող է երաշխաւոր ներկայացնել եւ ազատուել (մժը)։

Պատժի սովորական ձեւը տուգանքն է, որ առնուում է — ինչպէս տեսանք — յօգուտ Ողորմութեան Տան։ Մարմնական պատիժները եւ մահապատիժները տրւում են հաղուագիւտ դէպքերում, բոլորն էլ ճշտօրէն նախորոշուած օրէնքով։ Օրինակ, 192-րդ օրէնքն ասում է.— Եթէ ծեծողը «հսկայ» եւ բարկացոտ մարդ է, դրւում է բանտ՝ մինչեւ որ մեղմանայ եւ փուքն իջնի։ Եթէ իշխանազուն եւ փառասէր է՝ «զան հարցի նմա հռչակաւոր տեղի»։ Եթէ աղքատ է եւ կռուարար՝ «ստանասցէ ի ձեռանէ առն այնմիկ զանս նման նմին, որպէս ինքն եհար նըմա»։

Շիկացած երկաթով այրում են ձեռքը՝ ստորագրութիւնը կեղծողի, իսկ եթէ հրամաստակ լինի կեղծածը կամ հրաման, պատերազմի ժամանակ — կեղծարարը «մահու մեռցի» (ՃԿԲ)։ Այրում են ձեռքը՝ եթէ համարձակւում է խփել քահանային (ՃԻ)։ Այրում են «փափուկ միսը», եթէ մէկը կեղծում է կըշռաքարերը։ Երեք անգամ բռնուելիս՝ այդ պատիժն է տրւում, իսկ չորրորդ անգամը՝ «մահու մեռցի» (ՃԻԴ)։

Մահուան պատիժ է տրւում բոլոր մարդասպաններին (ՃԿԴ)։ Կանանց եւ օրիորդների պատիւը բռնութեամբ արատաւորողներին (ՃԿԵ)։ Գողերին եւ աւազակներին, եթէ նրանց տարածի արժէքը 100 արծաթ դահեկանից աւելի է (ՃԿԶ, ՃԿԲ)։ Պատերազմի ժամանակ բռնուած լրտեսներին (ՃԿԷ)։ Բոլոր դրամանենգներին (ՃԻԶ) եւն.։

Շահամիրեանի առաջադրած օրէնքների թւում կան այնպիսիները, որոնց վրայ մենք տեսնում ենք խոր հնութեան կնիքը։ Մասնաւորապէս աւատական կարգերի հետքերը շատ զօրեղ են նրանց վրայ։ Մի քանի օրինակներ բաւական են մեր ասածը հաստատելու համար։ Այսպէս —

Արհեստաւորը չի կարող իր արհեստով պարապել, եթէ նա իր վարպետից չունի վըկայական առ այն, որ իր արհեստը լաւ գիտէ նա (ՃԻԶ)։ Վաճառելի ապրանքի համար նահանգից նահանգ անցկացնելու տուրք է տրւում 5 % (ՃԺԷ)։ Ուտելեղէնի համար ձիու, ջորու, ուղտի, էշի եւ եզան բեռից, գաւառից գաւառ անց կացնելիս, վճարւում է 10 դրամ պղնձի, իսկ այլ ապրանքների բեռից՝ 1 դահեկան արծաթի։ Քրէական յանցանքների համար մահուան դատապարտուածը եթէ փախչում է, կախաղան են հանում նրա ձուլածոյ պատկերը (մժբ)։

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Ինչպէս ասացինք՝ Շահամիրեանի «Որոգայթ Փառաց»ը քաղաքական մի ծրագիր է — Հայաստանի փրկութեան եւ հայ ժողովրդի երջանկութեան համար, բայց դժբախտաբար մի վերացական եւ անիրական ծրագիր, չբըղխող ամենեւին այն երկրի ռէալ պայմաններից, որի համար առաջարկւում էր նա։ Իր դատողութիւնների մէջ եւ մանաւանդ հայ իրականութիւնը ճանաչելու գործում, եթէ չասենք միամիտ, բայց պիտի ասենք, որ չափազանց լաւատես է մեր հեղինակը։

Նա մարդկային իրականութիւնը չի ճանաչում, մասնաւորապէս հայ իրականութիւնը իր դժոխային պայմաններով։ Նա կարծէք մի օտար մոլորակի վրայից յանկարծ իջել է երկիր՝ իր ժողովրդին ազատութիւն եւ երջանկութիւն բերելու համար։ Նա հրապարակ է նետում մեծ-մեծ գաղափարներ, գծում է դժուարին ծրագրեր, միամիտ մարդու լաւատեսութեամբ հաւատալով, որ ամենայն ինչ արդէն կատարեալ է, որ այդ ամէնը կարող է իրականութիւն դառնալ, այն էլ հայկական դժխեմ կեանքում։

Ազատութիւն, օրէնք, հաւասարութիւն եւ այլ նման գաղափարներ, որոնց համար մարդկութիւնը դարերով պայքարել է, միլի-